ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **01.02.2021 թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) նիստը:

Մասնակցում էին.

Մ. Առաքելյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ք. Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Հ. Ավագյան	- ԱԱՏՄ ղեկավար
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խոհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Ե. Զադոյան	- ԱԱՏՄ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության պետ
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Ավետիսյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական

Բացակայում էին.

Կ. Բրուտյան	- ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Գ. Գրիգորյան	- «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Օրակարգ.

1. ԱԱՏՄ 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում.

2. Այլ հարցերի քննարկում:

Հ. Ավագյանը առաջարկեց օրակարգում ընդգրկել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կողմից իրականացված ԱԱՏՄ-ի կատարողականի գնահատման հարցը և քննարկել:

Հ. Պողոսյանը առաջարկեց քննարկել աշխատանքի իրավունքի հետ կապված հարցեր, հաշվի առնելով ԱԱՏՄ-ին աշխատանքի իրավունքի բնագավառում վերապահված վերահսկողական նոր լիազորությունը:

Մ. Առաքելյանը շեշտեց աշխատանքի իրավունքի հետ կապված հարցերի կարևորությունը և առաջարկեց հարցը քննարկել օրակարգից դուրս՝ աշխատանքային կարգով այլ կազմով:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ օրակարգը հաստատվեց և որոշվեց օրակարգի հարց ընդգրկել նաև ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կողմից իրականացված ԱԱՏՄ-ի կատարողականի գնահատման հաստատման հարցը:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում

Հ. Ավագյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի 2020 թվականի հաշվետվությունը: Նշեց, որ այն կազմված է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն, իսկ կատարողականի գնահատումը՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 29.07.2015 թ. N 693-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համաձայն: Նշեց, որ տարվա վերջ իրականացվել են 85 ստուգում, իսկ 2021 թվականին արդեն ընդհանուր առմամբ 138-ը:

Մ. Առաքելյանը հարցրեց, թե ինչ է փոխվել այդ ստուգումների արդյունքում տնտեսության կամ քաղաքացիների շրջանակներում, և ինչ բարելավումներ են եղել: Արդյո՞ք ստուգումների արդյունքում տրվում են հանձնարարականներ և ստուգվում այդ հանձնարարականների կատարողականը, թե ոչ, և ինչ մեխանիզմներ են առկա և որո՞նք են կիրառվում:

Հ. Ավագյանը նշեց, որ ստուգումների արդյունքում տրվում են կարգադրագրեր՝ խախտումները վերացնելու ուղղությամբ, որից հետո իրականացվում է տրված կարգադրագրի կատարողականի ստուգումներ:

Ա. Ասոյանը նշեց, որ արձանագրված խախտումները վերացնելու գործիքակազմ առկա է, օրինակ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում լիցենզիայի պարտադիր պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում անմիջապես տեղեկացվում է ՀՀ առողջապահության նախարարություն՝ լիցենզիան կասեցնելու նպատակով:

Հ. Ավագյանը նշեց, որ կարևոր գործիքներից է այն, որ ԱԱՏՄ-ին աշխատանքային իրավունքի բնագավառում վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվում են համապատասխան վարչական վարույթներ՝ դիմումների հիման վրա, որոնց մեծ մասը կարճվում է դիմումից հրաժարվելու հիմքով, հաշվի առնելով, որ

տնտեսավարողները վերացնում են խախտումները և դրանով իսկ աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են:

Մ. Առաքելյանը հարցրեց, թե արդյոք ստացված արդյունքները չեն ենթադրում համապատասխան փոփոխությունների նախատեսում: Կարևորեց, պետության և մասնավոր հատվածի ու քաղաքացիների շփումը նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունը և ստուգումների իրականացումը ինքնանպատակ չդարձնելու հանգամանքը:

Հ. Ավագյանը նշեց, որ ստուգումների արդյունքները ցույց տվեցին, որ որոշ չափանիշներ կարիք ունեն վերանայման:

Ե. Զադոյանը նշեց, որ մեթոդաբանության փոփոխությունները նախատեսված են արդեն իսկ ԱԱՏՄ 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրում:

Շ. Դանիելյանը նշեց, որ ԱԱՏՄ-ի կողմից իրականացված ստուգումների արդյունքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մի շարք կազմակերպություններում նկատվում է դրական առաջընթաց՝ կապված օրենքին համապատասխան գործունեություն իրականացնելու հետ և բարձրացել է պարտադիր պահանջների պահպանման նկատմամբ զգոնությունը:

Ա. Ասոյանը նշեց, որ առաջնայինը պլանային ստուգումներն են, և տեսչական մարմինների մեթոդաբանություններով նախատեսված է, որ ոլորտային ռիսկայնության չափանիշները ենթակա են փոփոխման՝ հաշվի առնելով տվյալ ոլորտի զարգացումները: ԱԱՏՄ-ի ռիսկի մեթոդաբանությամբ հաշվի է առնվում ոլորտային ռիսկայնությունը և անհատական ռիսկը: Ստուգաթերթի յուրաքանչյուր հարց ունի իր կշիռը, որով որոշվում է անհատական ռիսկը:

Լ. Նանուշյանը նշեց, որ նախորդ տարում, թե՛ ԱԱՏՄ-ի և թե՛ ՀՀ առողջապահության նախարարության համար ծրագրերից դուրս չնախատեսված գործողությունների տարի էր: ՀՀ առողջապահության նախարարության և ԱԱՏՄ-ի միջև սերտորեն համագործակցություն է իրականացվել և հաշվետվությամբ կատարված աշխատանքների մեծ մասը չի արտացոլված: Հարցրեց, թե դեղերի շրջանառության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում ինչ խախտումներ են արձանագրվել՝ դեղերի մակնշման, թե դեղերի դեղատոմսով դուրս գրման, ինչպես նաև ջրի խախտումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության արդյունքում ինչ միջոցներ են ձեռնարկվել:

Հ. Ավագյանը նշեց, որ հիմնականում արձանագրվում են դեղերի հավաստագրման հետ կապված խնդիրներ, առկա են նաև չլիցենզավորված գործունեություն իրականացնելու և դեղերի դեղատոմսով դուրս գրման խախտումներ:

Ա. Ավանեսյանը առաջարկեց պարզաբանել հաշվետվության 1-ին հավելվածում առկա աղյուսակի գումարային տարբերությունները:

Թ. Հակոբյանը նշվածի հետ կապված նշեց, որ առկա են ԱԱՏՄ-ի կողմից իրականացված այլ աշխատանքներ, որոնք արտացոլված չեն:

Ա. Ավանեսյանը առաջարկեց լրացնել ԱԱՏՄ-ի կողմից կատարված այլ աշխատանքները, քանի որ նյութը լինելու է հրապարակային:

Քննարկման արդյունքները ամփոփելով՝ Մ. Առաքելյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (7 կողմ) ԱԱՏՄ 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագիծը արժանացավ հավանության:

2. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կողմից իրականացված ԱԱՏՄ-ի կատարողականի գնահատման հաստատում

Մ. Առաքելյանը առաջարկեց նաև ներկայացնել հաշվետվությամբ արտացոլված կատարողականի գնահատականը:

Թ. Հակոբյանը ներկայացրեց կատարողականի գնահատումը՝ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները, այն ոլորտները, որոնցում արձանագրվել են խախտումները, ստուգումների միջին տևողությունը, մարդկային ռեսուրսները, ԱԱՏՄ-ի դեմ բերված բողոքները և դրանց նախորդ տարիների տարբերությունը, ինչպես նաև դրանց բավարարման հարաբերակցությունը:

Քննարկման արդյունքները ամփոփելով՝ Մ. Առաքելյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (7 կողմ) ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կողմից իրականացված ԱԱՏՄ-ի կատարողականի գնահատումը հաստատվեց:

Հ. Ավագյանը առաջարկեց որակի հաշվետվությունները քննարկել հեռավար՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Մ. Առաքելյանը համաձայնվեց:

Որոշվեց.

1. Հավանություն տալ ԱԱՏՄ 2020 թվականի տարեկան հաշվետվությանը.

2. Հաստատել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության կողմից իրականացված ԱԱՏՄ-ի կատարողականի գնահատումը.

3. ԱԱՏՄ որակի ապահովման վարչության հաշվետվությունները քննարկել հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ